

այս տարածայն կարծիքները կան ազգերնուս մէջ, քանի որ տգէտ ժողովուրդը երկպառակ է կրօնի կարծեաց մէջ, ոչ երբէք գիտութիւն կը ծաղկի, և ոչ երբէք ազգերնուս բովանդակութիւնը աղքատութենէ, ելել և քաղաքականութե ծաղկիլ պիտի կարենայ :

— Այս . այդ այգպէս է :

Է . Ուրեմն եկէք այս բանիս մէկ նոր հնարք մը մտածէնք :

Ը . Ես կարծեմ որ այդ անհնարին բան է :

Թ . Ես կարծեմ որ եթէ մենք Ճըշմարիտ բարեսրտութեամբ ազգերնուս աղէկութիւնը ուզենք, կրնանք մէկ հնարք մը գտնելու :

Ա . Ես կ'ըսեմ՝ որ երեքներնուս ալ կրօնքի առաջնորդները մէկ տեղ ժողովենք, թող անսնք մէջերնին միաբանին, և այն ատեն մենք ալ, բոլոր ժողովուրդն ալ առաջնորդներնուս ետևէն երթալով, ինքիրեն ահա կը միաբանինք :

Բ . Այդ ըլլալու բան չէ . որովհետեւ առաջնորդնիս ալ չեն կրնար միաբանիլ. վասն զի այդ բանիդ մէջ անձնական շահ կը մտնէ . որովհետեւ առաջնորդներէն ոմանք աւելի տգէտ են, ոմանք աւելի գիտուն . ոմանք աւելի պատուաւոր, և ոմանք անպատիւ . երբ ասոնք միաբանելու խորհրդի նստին, յայտնի է որ տգէտները յանձն չեն առնուր միաբանիլ, գիտնալով որ եթէ ամէն առաջնորդներ միանան, այն ատեն տրդէտները երեսէ պիտի իյնան, իրենց վնաս պիտի ըլլայ . անոր համար ամէն կերպով կը ջանան որ այդ բանդ չյաջողի : Յաջողելու ալ ըլլայ, ետևէն անսնք նորէն քակտելու կը ջանան . այս բնական է . որով աւելի խորվութիւն և երկպառակութիւն կը ծագի տգէտ ժողովրդեան մէջ՝ քան թէ . միութիւն սիրոյ :

Գ . Ես ձեզի, ո՛բարեկամք, իմ վերջին կարծիքս ըսեմ . ազգերնուս մէջ կատարեալ դաստիարակութիւն խոթելու համար, և մեր փափաքած վախճանին հասնելու համար, կ'երեայ որ պէտք

չէ հիմնակու հիմա կարծեաց երկպառակունիքը վերցընելու ջանանք, որ է անհընարին գործ . այլբոլոր ջանքերնիս դարձնենք միաբանելու որ հասարակաց վարժարաններ բանանք կատարեալ ուղիղ դաստիարակութեան : Եւ այս բանիս համար մենք միայն բաւական ենք՝ թէ որ Ճշմարիտ սրտով ուզենք առանց ականնջնելու երկպառակիչ խորհուրդներու :

(Օ ասոնք պատմեց ծերունին իր ազգին վրայ :

(Պատմութեան)


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՍՈՎՐՈՒԹԻՒՆ

Ցամաքարտուրիս :

ՀԱՄԱԿՈՒԾՆ ԺԱՄԱՆԱԿԻՆԵՐՈ ԽԻԱՏ ՀԱՅԱԿԱԼՈՐ Է Ապանիոյ ցլամարտը, ինչպէս որ էր ատենօք հոռվլմայեցւոց գազանամարտը . և նոյն վայրենի ախորժանօք ու եռանդեամբ կը դիմեն սպանիացիք աս ցլամարտի անգութ հանդէմներուն, ինչ սիրով որ հոռվլմայեցիք կրկէսները կը վազէին արիւնախառն տեսարաններով զուարձանալու համար . այնպէս որ Ապանիոյ կառավարութեանը ժողովուրդը գոհ ու խաղաղ բոնելու համար ունեցած զօրաւոր միջոցներէն մէկն ալ զինքը աս հանդիսով զքաղեցնելուն է, որով և ժողովուրդական հանդէմներուն մէջ չչամարտը քան զամէնն աւելի մեծ է, փառաւոր ու ամէն տեղ հռչակուած . և անոր համար ալ հանդիսին մէջ թագաւորէն ու թագուհիէն սկսեալ ամէն տեսակ աստիճանի մարդխուռն դիմելէն զատ, նաև ժողովուրդեան ամէն կարգը զատ զատ ներկայացուցիչներ ունի ամիրիթէատրոնին առանձին աստիճաններուն վրան :

Խակ ցլամարտութե ստորագրութեա-



ՑՂԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ :

Նը վրայ գալով, զիսնալու է որ կերպ
կերպ կ'ըլլայ ցլամարտութը . ձիով կամ
հետեւակ, զինեալ կմանզէն կը կռուին :
Ռոջի կերպին մէջ, ցլամարտները շատ
մը տիգաւոր ձիաւորներ կ'ըլլան, որոնք
մէկ գծի վրայ ետևէ ետև կը շարուին
իրարմէ յիսնական ոտքի չափ հեռու , և
աշուշնին անշարժ կրկիսին մէկ ծայրը
տեմնուած գոյց դրան վրայ կը սևեռեն ,
ուսկից ցուլերը՝ արգելանէն գուրս
կ'արձըկեն : Եշթ ձիաւորները աս կեր-
պովս տեղը պատրաստ կը կենան , ցլե-
րուն պահապանները արգելաններուն
մէջ երկաթէ սուր խթաններով կը կատ-
ղեցընեն զգազանները , այնպէս որ իրենց
ցաւուն ու կատաղութեան մռնչիւնը բո-
լոր կրկեսը կը հնչեցընէ , որով հանդիսաւ
կանները կ'իմանան թէ իրենց անհամ-
բերութեամբ սպասած վայրկեաննին

մօտեցեր է . Ո՞ւ մ'ալ յանկարծ զուռը
կը բացուի , և ցուլմը վերջի աստիճանի
կատաղութեան մէջ արգելանէն դուրս
կը յարձակի . և առջի ձիաւորը անշարժ
կեցած տեմնալուն՝ ինքն ալ կանկ կ'առ-
նէ , իբրև թէ գոհ կը ցուցընէ ինքը
զինքը՝ իր նոր քաշած ցաւերուն վրէմը
առնելու յարմար առիթ մը գտնալով .
եաքէն առջեկ ոտուրներովը գետինը կը
զարնէ , խղգուկ ու կտրտուկ ձայներ կը
հանէ , ու մէյ մ'ալ յանկարծ սոսկա-
լի կատաղութեամբ մը ձիաւորին վրան
կը յարձակի : Եւ երբոր ցուլը իր թըշ-
նամեցն քովը մօտեցած , գլուխը կը
ցածցընէ զարնելու համար , ձիաւորը ան-
ատենը իր ձին կողմնակի յառաջ կը վա-
րէ և միանգամայն նոյն միջոցին ցլին փո-
ղը կը միտէ ուժով մը իր նիզակը և վեր-
քին մէջը կը կոտրէ զտէգը . ցուլը աւե-
լի կատղած իր հարուածը պարապ ելա-

լուն ու վէրք մըն ալ առնելուն վրայ , մէկէն երկրորդ ձիաւորին վրայ կը յարձակի անհնարին թափով . իսկ ձիաւորը առջինին ըրած գործողութիւնը կը կրկնէ , խեղչ ցուլը նորէն պարապը կը զարնէ ու ուրիշ նոր վէրք մըն ալ կ'ընդունի . ասկէց վերջի աստիճանի կատղած՝ երրորդին վրայ կը յարձակի : Այս անհաւասար կոիւս կ'երկարի ինչուան որ ցուլը կատաղութենէն , ցաւէն ու վէրքերուն վաղած արիւնէն ուժէ ինկած՝ կ'իյնայ կը մեռնի կրկէսին մէջ : Բայց երբեմն հակառակը կը պատահի , երբ ձիաւորը վտանգաւոր վայրկեաններէն մէկուն մէջը պզտի սխալ մըն ալ գործելու ըլլայ . վասն զի ան ատենը ձին ցլուն սոսկալի հարուածէն գետինը փուռելով , իրեն վրայի հեծեալն ալ մահուան վտանգին մէջ կը ճգէ . այն պէս որ ձիաւորին ալ ուրիշ ճար չմնար իր ձիուն վրէմն առնելու և միանգամայն իր պատիւը անարատ պահելու , բայց եթէ սուրը մէջքէն քաշել և մէկէն ցլին հետ քաջութեամբ կուռիլ ու նոյն տեղը սպաննել : Խակ կուռոյն միջոցը հանդիսականները անաշառապէս բարձրաձայն պուաներով ցլին և ձիաւորին քաջուեց արժանաւոր գովութիւնը կու տան :

Բայց հետեակ կուռոյն մէջ երկու կողմէն ալ զօրութեանց աւելի հաւասարութիւն մը կ'երեայ : Ավկէսին մէջ մարդ մը միայն կ'իջնոյ ցլին հետ կը ռուելու , աջ ձեռքը սուր մը առած և ձախ ձեռքն ալ գաւաղան մը՝ ծայրը կարմիր դրօշ մը անցուցած , և ինքը կրկիսին մէջ ցլին արգելանին զրանը զիմացը՝ քանի մը քայլ հեռուեկեկ կանկ կ'առնէ : Հյուլը՝ որ ըստ բաւականին կատղեցընելէն ետև ազատ կը թողուն , մէկէն իր աչքին դիմացը կարմիր դրօշն ծածանելը տեսնալով՝ իր բնական հակարութեամբ՝ որ ունի սպայծառ գունոց՝ սասատիկ կատղելով զմարդը կը թողու , դրօշն վրայ կը յարձակի ամենայն ուժով . նոյն միջոցին թէ որ ցլամարտը ուղենայ , մէկէն պատերազմը կը վերջացընէ , ցուլին փողը միսելով իր սուրը . բայց իր քաջութիւր ցուցընելու համար

կը զգուշանայ մէկէն սպաննելէն , ուստի կ'երթայ նորէն ցլին դիմացը անշարժ կը կենայ , ու ձեռքի դրօշը շարժելով , զգազանը կը գրգուէ , այսպէս երկար ատեն կուռելէն վերջը , մահացու հարուածը կու տայ ցլին : Բայց շատ անգամ ցլամարտը ասով ալ գոյն չըլլար . իր քաջութիւնը աւելի լաւ կերպով ցուցընելու համար , երբ զլուխը կը ծուէ որ եղջիւրովը զարնէ , զարմանալի արագութեամբ մը մէկ սուքը կենդանւոյն երկու եղջերաց մէջտեղը գանկին վրայ դնելով և մէկան ալ ուսին վրայ , կայծակի պէս կենդանւոյն բոլոր մարմնոյն վրայէն կը ցատքէ , և հանդիսականներէն անթիւ ծափահարութիւն կ'ընդունի : Երբեմն ալ կը պատահի որ ցուլը ամենեին չուզեր պատերազմիլ , կամ իր հեղահամբոյր բնաւորութելը պատճառաւ , և կամ կարծես թափանցողութեամբ մը իմանալով որ զինքը խարխը քելով կը յօգնեցունեն . նոյն միջոցին ամփիթէատրոնին ամէն աստիճաններէն ելած աղաղակները , դառն թշնամանքները և ամէն տեսակ գրգուռէները և ցլամարտին կերպ կերպ ըրած նախատիքները զգուլը ամենեին չեն կրնար կատղեցընել , այլ հանդարտ քալուած . քովառանց զեն մը ընելու՝ կրկիսին մէջ կը սկսի ժուռ գալ . բայց աս իրեն յամու հանդարտութիւնը հանդիսականները զայրացընելով , ամփիթէատրոնին ամէն կողմերէն կը սկսին սոսկալի աղաղակներով “ Ի մահ , Ի մահ , ” պոռալ . ան ատենը ցլամարտը հանդիսականնաց առջև պատկառանօք մը ծուելէն ետեւ , տուած վՃիռնին շուտով մը ՚ի գործ կը գնէ բոլոր ուժովը գրեթէ ամբողջ սուրը ցլին փողը միսելով . խեղչ կենդանւոյն բոլոր մարմինը կը սարսի այս սոսկալի հարուածէն . և քիչ մը ատեն ալ գեռ սուքի վրայ կենալէն ետեւ մեռած կը փուռի գետինը :

Խակ անզէն ցլամարտութեան համար գէթ տասուերկու ցլամարտ հարկաւորէ . ասոնց բոլոր ճարտարութին է ամէն . բը մէկէն միատեղ ցլին վրայ յարձակիլ ամէն կողմանէ , ետեւէն , առջեւէն , քո-

վերէն . սկզբան ցլուն առջեւէն կը փախ ցին ինչուան որ յարձակելու յարմար ժամանակը գայ . նոյն միջոցին չորս կողմէն ցլին վրայ կը թափին , ու ոտքէն պոչէն և եղջիւրներէն բոլոր ուժովնին քաշ կը ռատելով՝ գետինը կը տապալեն . բայց այս տեսակ ցլամարտութեան մէջ շատ դժուարին է որ ցլամարտներէն մէկն ալ չվնասուի , այլ նաև շատ անգամ մեռնող ալ կ'ըլլայ : Ուրիշ կերպ մըն ալ կայ ցլամարտութեան մէկ հոգւով , որ սրով զինեալ և տակառ մըն ալ ունի իբրև իրեն պաշտպանողական զէնք . երբոր ցուլը իրեն վրայ կը յարձակի , ինքը մէկէն տակառին ետեւ կը կծիի . ցուլը կատղած՝ եղջիւրովը կը զարնէ տակառին , օդը կը նետէ և դիմացը ձգած կը սկսի գլուրել առանց ցլամարտին վնաս մը կարենալու ընել : Երբ հանդիսականները կը տեսնան որ տակառը բաւականապէս գլուրեցաւ , ցլին մահուան վճիռը կը կտրեն . նոյն միջոցին ցլամարաը թրի հարուած մը ինչեցնելով՝ զկենդանին գետինը կը տապալէ :

Երբէմն ալ ցլամարտները անծայր թրով ու նիզակով կը պատերազմին ցըլին հետ , բայց այս տեսակը այնչափ յարգի ու ախորժելի չէ սպանիացւոց , որով հետեւ արիւնհեղութիւն ըըլլար . անոր համար փառաւորագոյն սեպուածն է , երբ շատ ցլեր մեռցնելու բերուածը ըլլան , և քանի մը ձի ու ցլամարտ կրկէ .

սին մէջ փռուին , ու մէկ կողմանէ իրենց ացքին առջեւ տեսնեն արեան հեղներ վազած . այսպիսի ատեն ամփիթէարոնին աստիճաններուն վրան անհամար բազմութիւն կը լեցուի :

Ապանիացւոց ազնուականներն ալերքեմն կրկէսը կ'իջնան ցլամարտներու հետ ձարտարութեան ու ձարտկութե վրայ մրցելու և ժողովրդեան ծափահարութիւնը ընդունելու համար , ինչպէս որ հոռվմայեցւոց պատրիկները գաղանամարտութեանց մէջ կ'ընէին : Իսկ յիսնարական փառասիրութեան զոհ եղեր է ատենօք Փորթուգալի առաջին կարգի ազնուական ցեղէ մէկ երիտասարդ մը , որ ցլին վրայէն ցատքելու ատեն՝ ցուլը գարձեր կատաղութք ետեփ կողմէն մահացու վիրաւորեր է զինքը :

Իսկ սպանիացւոց ազգային հանդիսին շատ եւրոպացի մատենագիրներ ականատես ըլլալով՝ նկարագրութին ալըրած են տաղաչափեալ ու արձակ բանաստեղծութեամք : Իսկնց մէջ իսիստ անուանի սեպուած է , իբրև նկարագրական մասին ամենագեղեցիկ օրինակ՝ Խուա Պայցըն անգլիացի մեծքերթողին տուած վառվուուն նկարագրը իր Շայլտ Շարոլտ՝ ըսուած հըրշակաւոր բանաստեղծութեանը մէջ , որուն թարգմանութիւնը պատշաճ կը համարինք ընծայել հոս , միանգամայն իբրև Պայցընի ոձոյն պղտի ձաշակ մը :

ՀԲ

ԴՇաւասիկ բացաւ կըրկէս , թողուն ըզդաշարն համարձակ .

Խւ բիւրաւորք ըզմիւրուք հոծ հանդիսատես շուրջ կուտակին .

Չե ուրեմն աւագ փողոյն նախկին հաւեղն հնչեալ հագագ

Խւ ոչ մի տեղի թափուր տարաժամեալ մընայ եկին :

Խնդ ազատք և մեծամեծք , և բամբըշանց պար խուռներամ

ՀԳ

Ծուեն բարբառք և հըծծիւն — և 'ի նիւս սօս երիվարաց

Ապիտակ 'ի գլուխը գարգմանակ , ոսկեմարակ ու 'ի թեթև տէգ

Հանգերձին քառեակ ասպետք 'ի կեղակարծ գործ մրցանաց .

Եւ խոնարհեալ նախ հանդիսին յառաջադէմ գան առ ՚ի վէգ .
Ճոխ ըզթիկամք նոցուն ամղան . արձակ արձակ արշաւեն ձիք .
Բազմավոտանգ թէ ՚ի սերկեան ասպարիզի փայլեն յաղթող՝
Օ ամբոխին բարձր ըզկայթիւն և ըզտիկնայց քաղցր ակնարկիք .
Ար վեհ գործոց վեհ մրցանակ՝ տարցեն սըրտիւքըն մեծագոհ .
Աչ մեծ քան զայդ թէ ալքայք և ոչ սալարք փոխարինին :

ՀԴ

Ոսկեհանդերձ ըստ անձին արկեալ օդիկ յըզգեստ փաղփուն
Եմիջակին արձանացեալ կայ թէթևոտըն մարտացուլ
Յիւր յեցեալ ՚ի զօրութիւն , և վառի սիրտըն եռանդուն
Բզբառաչողն անդէոց յերկիր զարքայ տապաստ հարուլ .
Հայց յառաջ՝ ըզքայլն ըզգոյշընդ շրջապատըն բերելով
Ո՞ի զանխուլ , քըննէ , ոտիցն յասպարիզին խոչ ինչ կայցէ .
Օէն յաջումետ նիզակ , բացէ ՚ի բաց կրուուի ձեպով .
Աչ յաւելին իշխեսցէ մարդ զիրկ մըտերիմն յանդրուվարէ .
Ար յաճախ ընդ վերելակն , եղուկ , ըզմահ փոխանակէ :

ՀԵ

Երրակի փողեաց շեփոր . ահաւանիկ տըւաւ նըշան ,
Եւ որջն անդէն փեռեկի . և անբարթառ Կկընկալիք
Շուրջ գրաւեեն ամենուստեք ըզմարդածիրն արձակարան .
Ինդոստ ՚ի դռոյթ թափ առնու անդ կենդանին քաջամարտիկ
Եւ մոլեգին կառուցեալ զակն՝ ՚ի դափր ոտին փորէ զերկիր .
Ահաւուր յիւրն ախոյեան անդ ետ ընդ ետ նահատակեալ .
Կտէն կամ անդ ըսպառնալից ուղղէ զձակատըն վրէժիւնդիր
Թափ ըզնախկին տալ յարձակոյթ . և բարկացայտ մերթ տատանեալ
Հրաբորթոք զարիւնախառըն բիբս ՚ի հիռ շրջանակէ :

ՀԶ

Եւ յանկարծուստ ոտնառէ . աչք սեեռեալ պընդակապին .
Երաց ՚ի բաց այ յանդուզըն պարմանի , հար բուռն ՚ի տէգ .
Երդ ժամ իցէ կորըստեան կամ կորովյա ձարտար բազկին
Ծզկատաղին մոլեգնութիւն ըմպահկելով սանձաբեկ .
Դեղաչափեալ քայլիւքն՝ ՚ի վազ ըզջախր առնուն ձեպող նըժոյզք .
Փըրփրերախ տրոփէ զուարակ ոչ ՚ի վիրաց զերծ խուսափեալ
Եւ գունդագունդ ՚ի կողաց հոսեն պըղտոր ուիք մահաշուք .
Եւ ցաւոցըն բըռնութիւն խոյս տայ ձեպէ գըլոր թաւալ .
Տէգ ընդ տէգ , թըրուին սըլաքք , նա բարձրակոծ վայ բառաշէ :

ՀԵ

Հայց միւսանգամ գայ յասպարէզ . ոչ ըզնա տէգ անդ կամ մըկունդ
Հայցասըմբակ երիվարաց ընդոստ ոչ դռոյթք պակուցանեն .
Սուժէ այր և վրէժիւնդիր սուրան նորուն զէնք սըրտաթունդ .
Հայց զուր են տէզք և ՚ի զուր մարտկին կորովիսկ համօրէն .
Կտտ երիվար պերձասոսորդ կայ դիտապաստ կործանեալ
Եւ միւսոյն , ողորմ տեսիլ , լանջք փեռեկեալ արիւնազանգ

Եւ մերկանդամ հոլանին թագուն ընդեղքըն կենսակալ .
Ու և 'ի մահ վիրաւոր բայց դեռ ըզբայլս վարէ սայթաք
Ու 'ի դողդոջուն հանէ կորովը վերելեակն ՚ի վրտանգաց :

ՀԲ

Պարտեալ ցուլ շընչասպառ ՚ի ճապաղիս թաթաւ արեանց
Ու վերջին հուր կատաղութեան զոտս հաստատէ յասպարիզին ,
Լուց վիրաւոր , տէգք կողամուխ , կուտին բեկորք շուրջ գեղարդանց .
Դնդ ապիկար ախոյեանք գազանական ՚ի հանդիսին :
Հայն ՚ի պահ ցըլամարտիկը յաջ ըզնովաւ ու ահեակ խաղան
Կարմիր ճօճեն պատմուճանս ըշտապ ՚ի շեշտ կրշուեն սուսեր .
Դոգեգարձ գազանն յետին ախոյենից մարտ փոլոտայ .
Ոին զայրոյթ . ածող անդ ձեռք ձըգէ զհանդերձն մահարեր .
Ո՞ոլեզին ըսքօղին աչք — և յաւազին տարուքերի :

ՀԹ

Դնդ ուր ըստուար իւր պարանոց ընդ ողնուլարըն գայ ՚ի կից՝
Ծրիւնախանձ վարսեալ երկաթ թափ անցանէ շեշտակի .
Ա, զկայ առնու — քըստմինին անդամք — բայց աննահանջ դեռ փըքալից՝
Տակաւ ընկճեալ և անկանի , յաղթող ՚ի ձայն աղաղակի ,
Ու ոչ մի հանէ հեծիւն անխուով ըզգունչ տըւեալ վերջին :
Պաճուճազարդ հասանեն կառք — կուտեն ըզդին անդ անկենդան —
Տեսիլ ախորժական վայրագ աչաց բազմամբոյին —
Դնդ սանձամերժ ճախրասլաց քառեակ նըժոյզք ընտրական —
Օ անարին ձըգեն ըզբեռն արշաւասոյր ՚ի գարշապար :

Զ

Եյս ըզբօսանք դըժընդակ տան ընծայեն յաճախ հրաւեր
Ո՞պանուհւոյ օրիորդին , և զպատանւոյն բերկրեն զոգիս .
Ո՞ովորեալ վաղքաջ յարիւն զըւարճանայ սիրտն աննըւեր
Ու վրէժ քինու զընկերին դիտեալ ախորժ վշտաց կարիս :

Խ . Գ .

ԿԵՆԱՅԻԱՆ

Ե՞ր ծաղկագեղ վարդենի՝
Ու էմըն խօսէր տապանի .
Հայէ պատճառ և օրէն
Եճել ՚ի վայրքս իմ աստէն .
Օածկել զարձանս ոսկետառ ,
Օ իմ ըզմիակ մըխիթար , :

Շաղիկն ասէր . “ Ե գըթոյդ
Լոյեաց զիս կար Տեառն և գութ .
Վան մահագոյժ ըզքո տառ
Լալ յիշատակ աստ պայծառ .
Եւ ես ծաղկեմ սփոփական
Մտուածային կենաց բան , :

ՄԱՆ . Զ ՐԵՒԻՆ